ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ Մ. Պ. ՊԱՊՅԱՆԻՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 24-րդ տարեդարձի առթիվ ընդունեցեք հայ հավատացյալների և հոգևորականության շնորհավորանքները և Մեր ողջույնն ու օրհնությունը։

Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԵՄՐԵՓՉՅԱՆ

Երուսաղեմ, Հայոց Պատրիարքարան

Երուսաղեմի պատրիարքական Տեղապահ Կյուրեղ Մայրապուն վարդապետ Իսրայելյանի պատրիարք ընտրվելը ողջունում ենք բերկրությամբ լի սրտով և իբրև Ամենայն Հայոց Հայրապետության Գահակալի փոխանորդ հաստատում ենք նրան Երուսաղեմի Հայոց Պատրիարք։

Հայոց Մայր Աթոռի Հայրապետական գահից օրհնություն ենք հայցում նրա վրա տիեզերքի Արարչից, որ շնորհեն նորընտիր Պատրիարքին կար և ուժ պատվով և շահավետ վարելու իր պաշտոնը հօգուտ Հայ Եկեղեցու և Ազգի և Էջմիածնի և Երուսաղեմի մեջ գոյություն ունեցող սիրո շաղկապն ամրապնդելու հուրախություն Ամենայն Հայոց Հայրապետության։

Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Թբիլիսի, Հայոց առաջնորդարան, Մելիք-Թանգյան
արքեպիսկոպոսին

Լի սիրությամբ ողջունում ենք Ձեր ձեռնարկությամբ և մեքենավարների Միության աջակցությամբ «Սասունցի Դավիթ» հրաստյլային շարասյան հանդառնակության կազմակերպումը։ Հայրապետական գահից օրհնություն ենք հղում Ձեզ և հաջողություն մաղթում Ձեր ապագա բարի ձեռնարկներին։

Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Թիհրան, Եկեղեցական Խորհուրդ, պ. Ռոմանոս Բասմաջյան

Ողջունում ենք բանակի գեներալ Բաղրամյանի անվան Ֆոնդ կազմակերպելու Ձեր ձեռնարկը։

Օրհնում ենք Ձեզ և Ձեր գերդաստանը, մաղթում Բարձրյալին շնորհել Ձեզ կար և ուժ ապագա նոր բարի ձեռնարկությունների համար։

Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ